ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1-5

ք.Երևան « 19 » **փետրվարի 2021թ.**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դրուզյա» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է «Դրուզյա» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է բնակտարածությունների մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 154 000 000 (հարյուր հիսունչորս միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 13 860 000 (տասերեք միլիոն ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես դեկտեմբեր ամսվա համար կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:[19]

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի հավելված N 2 վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011054013
02647057
Էդգար Գեվորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Դրուզյա» ՍՊԸ
ք. Տաշիր, Գետափնյա փ., տ 15
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150017697737750
ՀՎՀՀ 06957206
Ահարոն Խաչատրյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1
« 19 » փետրվարի 2021թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1-5 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բնակտարածությունների մաքրման ծառայություններ

ՀՀ դրամ

Ծառայության*								
Հ/Հ	Անվանումը և գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	Քանակը	Առավելագույն գին /ՀՀ դրամ/	Արդյունքի հանձնման վայրը	Կատարման ժամկետը
6	բնակտարածությունների մաքրման ծառայություններ-6 CPV 90911100/11	**Ամենօրյա մաքրման ծառայություններ** 1 Թվով 20 սենյակներում առկա գրասենյակային գույքի, համակարգիչների և այլ տեխնիկայի վրայից մատնահետքերի, կեղտաբծերի, փոշու կամ այլ հետքերի մաքրում 2 շքամուտքերի, նախամուտքերի, միջանցքների (այդ թվում՝ միջանցքներում առկա կահույքի և տեխնիկայի, կամ այլ գույքի), դահլիճների (ամբողջ գույքով), աստիճանավանդակների, ընդհանուր օգտագործման այլ տարածքների մաքրում 3 սպասարկման և ընդհանուր սրահների ապակիների, ապակյա դռների, պատուհանագոգերի մաքրում՝ հատուկ նյութերով 4 թվով 13 սանհանգույցների մաքրում (1.5 ժամը մեկ)՝ քիմիական նյութերով / թվով 7 հատ հայելիների մաքրում և փայլեցում, 20 հատ լվացարանների, 27 հատ զուգարանակոնքերի, 3 հատ պիսուարների և հատակի մաքրում, լվացում և ախտահանում/	դրամ	1	48 000 000	Սյունիքի մարզ գ.Կարճևան Մայրուղի-4- շինության մակերեսը՝ 3050.6 քմ., տարածքի մակերեսը՝ 26 400 քմ) Տվյալ հասցեում ՀՀ ՊԵԿ աշխատակիցների թիվը կազմում է՝ 80 անձ	Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 365 օրացույցային օր

		5	աղբամանների դատարկում, մաքրում, աղբի նոր տոպրակների տեղադրում, շենքից աղբի հեռացում						
		6	հատակի (այդ թվում՝ մանրահատակի, սալիկապատ հատակի, լամինատե հատակի) մաքրում, ինչպես նաև գորգերի, ուղեգորգերի, կավրոլինների և գորգանման այլ ծածկույթների մաքրում						
		7	Երթևեկելի մասի ամբողջ լայնությամբ, ավլող մեքենայի միջոցով իրականացնել մեքենայացված մաքրում՝ 22 000 քմ						
		8	ավլել, մաքրել, ինչպես նաև լվանալ /բացառությամբ ձմռան ամիսներին/ բնակտարածքը՝ 2000քմ և դարպասների հարակից 100քմ տարածքը/, հավաքել աղբը և թափոնները՝ տեղավորելով դրանք համապատասխան աղբամաններում						
		9	4 հատ մեծ /810-1100լ/, 2 հատ միջին /250-300լ/, 2 հատ փոքր /50-60լ/ աղբամանների տեղադրում /աղբամանների ձևը համաձայնեցնել պատվիրատուի հետ/ և դրանց մեջ կուտակված աղբի հեռացում, յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 1.5-5քմ տարածքը: Աղբամանների լվացում՝ 2 օրը մեկ:						
		10	մշակել տարածքում առկա կանաչապատ հատվածները, հնձել խոտը, խնամել ծաղիկները, թփերը ծառերը /այդ թվում, ըստ անհրաժեշտության նաև էտել/ և այլ բույսերը, հեռացնել մոլախոտը /այդ թվում նաև մայթեզրերից և ասֆալտապատ տարածքներից հատուկ նյութերի միջոցով/: 2 400քմ						
		Շաբաթական մաքրման ծառայություններ							
		11	տեղեկատվական վահանակների, ներքին և արտաքին ցուցանակների, սենյակային բույսերի, ջեռուցման մարտկոցների, դռների, բռնակների, վարդակների մաքրում						
		Ամսական մաքրման ծառայություններ							

		12	առաստաղների և պատերի փոշեզրկում, դրանց վրայի մաքրվող հետքերի, սարդոստայնների և այլ հետքերի վերացում, օդորակիչների և նկարների վրայից փոշու և այլ հետքերի մաքրում՝ ամսական 1 անգամ					
		13	թվով 48 հատ պատուհանների, բազրիքների, ճաղաշարերի, պատուհաններին ամրացված ցանցերի, դրսի պատուհանագոգերի և հորիզոնական շերտավարագույրների լվացում և մաքրում՝ ամսական 1 անգամ					
		14	թվով 13 սանհանգույցների սալիկների, պատերի, առաստաղների մաքրում և ախտահանում հատուկ նյութերով՝ ամսական 1 անգամ					
		15	դրսի աղբամանների լվացում և ախտահանում հատուկ նյութերով՝ ամսական 2 անգամ					
			Եռամսյակային մաքրման ծառայություններ					
		16	Ջահերի և այլ լուսատուների լվացում (փետրվար, մայիս, օգոստոս, նոյեմբեր)					
		17	տարածքում առկա ցուցանակների, տեղեկատվական վահանակների, լուսատուների, հենասյուների, դարպասների, արգելափակոցների և այլ սարքերի ու սարքավորումների, տարածքում առկա տաղավարների արտաքին պատերի մաքրում (փետրվար, մայիս, օգոստոս, նոյեմբեր)					
		18	Անգարներում և ծածկի տակ գտնվող այլ տարածքներում իրականացնել առաստաղների, պատերի և առկա իրերի փոշեզրկում, հատակի մաքրում, ավլում, լվացում, կուտակված աղբի հեռացում (մարտ, հունիս, սեպտեմբեր, դեկտեմբեր)					
			Տարեկան մաքրման ծառայություններ					
		19	շենքերի ճակատային մասի լվացում/252քմ/՝ տարին մեկ անգամ (հուլիս ամսին)					
		20	դիտահորերի /ինչպես նաև կոյուղու/, ջրահեռացման համակարգերի մաքրում /ըստ պատվիրատուի պահանջի/					
			Ձյան տեղումների դեպքում					

		21	Շենքերի տանիքների վրա գոյացած ձյան, սառույցի, ինչպես նաև տանիքների եզրերից կախված սառցալեզվակների մաքրում՝ պատվիրատուի պահանջով					
		22	կատարել ձյան մաքրման և հեռացման աշխատանքներ՝ այդ թվում մեքենայացված՝ հատուկ սարքավորումների միջոցով: Տարածքից հեռացնել կուտակված ձյունը, սառույցը, բանուկ մասում շաղ տալ ավազ և աղ /տեղումների ընթացքում՝ առնվազն ժամը մեկ/ /24000քմ/					
8	բնակտարածությունների մաքրման ծառայություններ-8 CPV 90911100/13		Ամենօրյա մաքրման ծառայություններ	դրամ	1	50 000 000	Շիրակի մարզ գ. Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4- (շինության մակերեսը՝ 5 386.7 քմ., տարածքի մակերեսը 42150 քմ) Տվյալ հասցեում ՀՀ ՊԵԿ աշխատակիցների թիվը կազմում է՝ 82 անձ	Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 349 օրացույցային օր
		1	Թվով 142 սենյակներում առկա գրասենյակային գույքի, համակարգիչների և այլ տեխնիկայի վրայից մատնահետքերի, կեղտաբծերի, փոշու կամ այլ հետքերի մաքրում					
		2	շքամուտքերի, նախամուտքերի, միջանցքների (այդ թվում՝ միջանցքներում առկա կահույքի և տեխնիկայի, կամ այլ գույքի), դահլիճների (ամբողջ գույքով), աստիճանավանդակների, ընդհանուր օգտագործման այլ տարածքների մաքրում					
		3	սպասարկման և ընդհանուր սրահների ապակիների, ապակյա դռների, պատուհանագոգերի մաքրում՝ հատուկ նյութերով					
		4	թվով 35 սանհանգույցների ամենօրյա մաքրում (1.5 ժամը մեկ)՝ քիմիական նյութերով / թվով 67 հատ հայելիների մաքրում և փայլեցում, 67 հատ լվացարանների, 58 հատ զուգարանակոնքերի, 15 հատ պիսուարների և հատակի մաքրում, լվացում և ախտահանում/					
		5	աղբամանների դատարկում, մաքրում, աղբի նոր տոպրակների տեղադրում, շենքից աղբի հեռացում					
		6	հատակի (այդ թվում՝ մանրահատակի, սալիկապատ հատակի, լամինատե հատակի) մաքրում, ինչպես նաև գորգերի, ուղեգորգերի, կավրոլինների և գորգանման այլ ծածկույթների մաքրում					
		7	երթևեկելի մասի ամբողջ լայնությամբ, ավլող մեքենայի միջոցով իրականացնել մեքենայացված մաքրում՝ 35 000 քմ					
		8	ավլել, մաքրել, ինչպես նաև լվանալ					

			/բացառությամբ ձմռան ամիսներին/ բնակտարածքը՝ 2050քմ և դարպասների հարակից 100քմ տարածքը, հավաքել աղբը և թափոնները՝ տեղավորելով դրանք համապատասխան աղբամաններում						
		9	2 հատ մեծ /810-1100լ/, 2 հատ միջին /250-300լ/, 2 հատ փոքր /50-60լ/ աղբամանների տեղադրում /աղբամանների ձևը համաձայնեցնել պատվիրատուի հետ/ և դրանց մեջ կուտակված աղբի հեռացում, յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 1.5-5քմ տարածքը: Աղբամանների լվացում՝ 2 օրը մեկ:						
		10	մշակել տարածքում առկա կանաչապատ հատվածները, հնձել խոտը, խնամել ծաղիկները, թփերը ծառերը /այդ թվում, ըստ անհրաժեշտության նաև էտել/ և այլ բույսերը, հեռացնել մոլախոտը /այդ թվում նաև մայթեզրերից և ասֆալտապատ տարածքներից հատուկ նյութերի միջոցով/: 5 100քմ						
		Շաբաթական մաքրման ծառայություններ							
		11	տեղեկատվական վահանակների, ներքին և արտաքին ցուցանակների, սենյակային բույսերի, ջեռուցման մարտկոցների, դռների, բռնակների, վարդակների մաքրում՝ շաբաթը 1 անգամ						
		Ամսական մաքրման ծառայություններ							
		12	առաստաղների և պատերի փոշեզրկում, դրանց վրայի մաքրվող հետքերի, սարդոստայնների և այլ հետքերի վերացում, օդորակիչների և նկարների վրայից փոշու և այլ հետքերի մաքրում՝ ամսական 1 անգամ						
		13	թվով 368 հատ պատուհանների, 14 հատ ապակյա վիտրաժների, 15 հատ ապակեպատ միջնորմների, պատուհանների և դռների թվով 8 ճաղավանդակների, բազրիքների, ճաղաշարերի, պատուհաններին ամրացված ցանցերի, դրսի պատուհանագոգերի և հորիզոնական շերտավարագույրների լվացում և մաքրում՝ ամսական 1 անգամ						

		14	թվով 35 սանհանգույցների սալիկների, պատերի, առաստաղների մաքրում և ախտահանում հատուկ նյութերով՝ ամսական 1 անգամ				
		15	դրսի աղբամանների լվացում և ախտահանում հատուկ նյութերով՝ ամսական 2 անգամ				
			Եռամսյակային մաքրման ծառայություններ				
		16	Ջահերի և այլ լուսատուների լվացում (փետրվար, մայիս, օգոստոս, նոյեմբեր)				
		17	տարածքում առկա ցուցանակների, տեղեկատվական վահանակենրի, լուսատուների, հենասյուների, դարպասների, արգելափակոցների և այլ սարքերի ու սարքավորումների, տարածքում առկա տաղավարների արտաքին պատերի մաքրում (փետրվար, մայիս, օգոստոս, նոյեմբեր)				
		18	Անգարներում և ծածկի տակ գտնվող այլ տարածքներում իրականացնել առաստաղների, պատերի և առկա իրերի փոշեզրկում, հատակի մաքրում, ավլում, լվացում, կուտակված աղբի հեռացում (մարտ, հունիս, սեպտեմբեր, դեկտեմբեր)				
			Տարեկան մաքրման ծառայություններ				
		19	շենքերի ճակատային մասի լվացում/1794քմ./՝ տարին մեկ անգամ (հուլիս ամսին)				
		20	դիտահորերի /ինչպես նաև կոյուղու/, ջրահեռացման համակարգերի մաքրում /ըստ պատվիրատուի պահանջի/				
			Ձյան տեղումների դեպքում				
		21	Շենքերի տանիքների վրա գոյացած ձյան, սառույցի, ինչպես նաև տանիքների եզրերից կախված սառցալեզվակների մաքրում՝ պատվիրատուի պահանջով				
		22	կատարել ձյան մաքրման և հեռացման աշխատանքներ՝ այդ թվում մեքենայացված՝ հատուկ սարքավորումների միջոցով: Տարածքից հեռացնել կուտակված ձյունը, սառույցը, բանուկ մասում շաղ տալ ավազ և աղ /տեղումների ընթացքում՝ առնվազն ժամը մեկ/ /37050քմ/				

9	բնակտարածությունների մաքրման ծառայություններ-9 CPV 90911100/14		Ամենօրյա մաքրման ծառայություններ	դրամ	1	56 000 000	Տավուշի մարզ գ. Բագրատաշեն 19 փող. թիվ 69- (շինության մակերեսը՝ 6 176 քմ., տարածքի մակերեսը՝ 47010 քմ) Տվյալ հասցեում ՀՀ ՊԵԿ աշխատակիցների թիվը կազմում է՝ 150 անձ	Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 340 օրացույցային օր
		1	Թվով 95 սենյակներում առկա գրասենյակային գույքի, համակարգիչների և այլ տեխնիկայի վրայից մատնահետքերի, կեղտաբծերի, փոշու կամ այլ հետքերի մաքրում					
		2	շքամուտքերի, նախամուտքերի, միջանցքների (այդ թվում՝ միջանցքներում առկա կահույքի և տեխնիկայի, կամ այլ գույքի), դահլիճների (ամբողջ գույքով), աստիճանավանդակների, ընդհանուր օգտագործման այլ տարածքների մաքրում					
		3	սպասարկման և ընդհանուր սրահների ապակիների, ապակյա դռների, պատուհանագոգերի մաքրում՝ հատուկ նյութերով					
		4	թվով 35 սանհանգույցների ամենօրյա մաքրում (1.5 ժամը մեկ)՝ քիմիական նյութերով / թվով 29 հատ հայելիների մաքրում և փայլեցում, 42 հատ լվացարանների, 42 հատ զուգարանակոնքերի, 9 հատ պիսուարների և հատակի մաքրում, լվացում և ախտահանում/					
		5	աղբամանների դատարկում, մաքրում, աղբի նոր տոպրակների տեղադրում, շենքից աղբի հեռացում					
		6	հատակի (այդ թվում՝ մանրահատակի, սալիկապատ հատակի, լամինատե հատակի) մաքրում, ինչպես նաև գորգերի, ուղեգորգերի, կավրոլինների և գորգանման այլ ծածկույթների մաքրում					
		7	Երթևեկելի մասի ամբողջ լայնությամբ, ավլող մեքենայի միջոցով իրականացնել մեքենայացված մաքրում՝ 39 250 քմ					
		8	ավլել, մաքրել, ինչպես նաև լվանալ /բացառությամբ ձմռան ամիսներին/ բնակտարածքը՝ 2260քմ և դարպասների հարակից 100քմ տարածքը, հավաքել աղբը և թափոնները՝ տեղավորելով դրանք համապատասխան աղբամաններում					
		9	2 հատ մեծ /810-1100լ/, 4 հատ միջին /250-300լ/, 2 հատ փոքր /50-60լ/ աղբամանների տեղադրում /աղբամանների ձևը համաձայնեցնել					

		պատվիրատուի հետ/ և դրանց մեջ կուտակված աղբի հեռացում, յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից 1.5-5քմ տարածքը: Աղբամանների լվացում՝ 2 օրը մեկ:					
		10 մշակել տարածքում առկա կանաչապատ հատվածները, հնձել խոտը, խնամել ծաղիկները, թփերը ծառերը /այդ թվում, ըստ անհրաժեշտության նաև էտել/ և այլ բույսերը, հեռացնել մոլախոտը /այդ թվում նաև մայթեզրերից և ասֆալտապատ տարածքներից հատուկ նյութերի միջոցով/: 5 500քմ					
		Շաբաթական մաքրման ծառայություններ					
		11 տեղեկատվական վահանակների, ներքին և արտաքին ցուցանակների, սենյակային բույսերի, ջեռուցման մարտկոցների, դռների, բռնակների, վարդակների մաքրում՝ շաբաթը 1 անգամ					
		Ամսական մաքրման ծառայություններ					
		12 առաստաղների և պատերի փոշեզրկում, դրանց վրայի մաքրվող հետքերի, սարդոստայնների և այլ հետքերի վերացում, օդորակիչների և նկարների վրայից փոշու և այլ հետքերի մաքրում՝ ամսական 1 անգամ					
		13 թվով 94 հատ պատուհանների, 26 հատ ապակյա վիտրաժների, 22 հատ ապակեպատ միջնորմների, պատուհանների և դռների թվով 3 ճաղավանդակների, բազրիքների, ճաղաշարերի, պատուհաններին ամրացված ցանցերի, դրսի պատուհանագոգերի և հորիզոնական շերտավարագույրների լվացում և մաքրում՝ ամսական 1 անգամ					
		14 թվով 35 սանհանգույցների սալիկների, պատերի, առաստաղների մաքրում և ախտահանում հատուկ նյութերով՝ ամսական 1 անգամ					
		15 դրսի աղբամանների լվացում և ախտահանում հատուկ նյութերով՝ ամսական 2 անգամ					
		Եռամսյակային մաքրման ծառայություններ					
		16 Ջահերի և այլ լուսատուների լվացում (փետրվար, մայիս, օգոստոս, նոյեմբեր)					

		17	տարածքում առկա ցուցանակների, տեղեկատվական վահանակների, լուսատուների, հենասյուների, դարպասների, արգելափակոցների և այլ սարքերի ու սարքավորումների, տարածքում առկա տաղավարների արտաքին պատերի մաքրում (փետրվար, մայիս, օգոստոս, նոյեմբեր)					
		18	Անգարներում և ծածկի տակ գտնվող այլ տարածքներում իրականացնել առաստաղների, պատերի և առկա իրերի փոշեզրկում, հատակի մաքրում, ավլում, լվացում, կուտակված աղբի հեռացում (մարտ, հունիս, սեպտեմբեր, դեկտեմբեր)					
			Տարեկան մաքրման ծառայություններ					
		19	շենքերի ճակատային մասի լվացում/1794քմ/՝ տարին մեկ անգամ (հուլիս ամսին)					
		20	դիտահորերի /ինչպես նաև կոյուղու/, ջրահեռացման համակարգերի մաքրում /ըստ պատվիրատուի պահանջի/					
			Ձյան տեղումների դեպքում					
		21	Շենքերի տանիքների վրա գոյացած ձյան, սառույցի, ինչպես նաև տանիքների եզրերից կախված սառցալեզվակների մաքրում՝ պատվիրատուի պահանջով					
		22	կատարել ձյան մաքրման և հեռացման աշխատանքներ՝ այդ թվում մեքենայացված՝ հատուկ սարքավորումների միջոցով: Տարածքից հեռացնել կուտակված ձյունը, սառույցը, բանուկ մասում շաղ տալ ավազ և աղ /տեղումների ընթացքում՝ առնվազն ժամը մեկ/ /41 510քմ/					

ՍԵՂՄՈՒՄՆԵՐ

Ամսաթիվ՝ 14 Հոկտեմբերի 2025թ.

Ներկա են՝ Ա. Մանասյան (նախագահող), Հ. Գրիգորյան, Ս. Ավետիսյան, Ն. Մելքոնյան, Գ. Սարգսյան, Ռ. Ղազարյան, Մ. Հակոբյան, Լ. Թադևոսյան, Դ. Խաչատրյան, Ա. Մկրտչյան, Ն. Հարությունյան, Ս. Գևորգյան, Ա. Ալեքսանյան, Ռ. Մարտիրոսյան, Ա. Գրիգորյան, Ն. Ավագյան, Ս. Հովհաննիսյան, Ա. Ղարիբյան, Ն. Մանուկյան, Ա. Գրիգորյան, Ս. Ավետիսյան, Ն. Մելքոնյան, Գ. Սարգսյան, Ռ. Ղազարյան, Մ. Հակոբյան, Լ. Թադևոսյան, Դ. Խաչատրյան, Ա. Մկրտչյան, Ն. Հարությունյան, Ս. Գևորգյան, Ա. Ալեքսանյան, Ռ. Մարտիրոսյան, Ա. Գրիգորյան, Ն. Ավագյան, Ս. Հովհաննիսյան, Ա. Ղարիբյան, Ն. Մանուկյան

Բացակա են՝ Ս. Գրիգորյան, Ա. Ղարիբյան, Ն. Մանուկյան

Արձանագրող՝ Ս. Գրիգորյան

Տևողություն՝ 08:00–09:30

---

1. Ներկայացվող հարցերի քննարկում

Ներկայացվեց 2025 թվականի հոկտեմբերի 14-ի դրությամբ ներկայացված 24 գրություն, որոնցից 8-ը՝ հասցեագրված Գ. Սարգսյանին, 6-ը՝ Ս. Գրիգորյանին, 4-ը՝ Ա. Մանասյանին, 3-ը՝ Ն. Մելքոնյանին, 3-ը՝ Ռ. Ղազարյանին, 2-ը՝ Մ. Հակոբյանին, 2-ը՝ Դ. Խաչատրյանին, 1-ական՝ Լ. Թադևոսյանին, Ա. Մկրտչյանին, Ն. Հարությունյանին, Ս. Գևորգյանին, Ա. Ալեքսանյանին, Ռ. Մարտիրոսյանին, Ա. Գրիգորյանին, Ն. Ավագյանին, Ս. Հովհաննիսյանին, Ա. Ղարիբյանին, Ն. Մանուկյանին։ Սահմանվեցին հետևյալ ժամկետները՝ 7 աշխատանքային օր՝ հասցեագրումներ, 14 օր՝ տեղեկատվական գրություններ։

Գլուխ (մս)(հիմնական դրամական միջոցներ և ֆինանսական ռիսկեր):

Ս. Գրիգորյան՝ «Ինչպես գիտեք, մեր ընթացիկ հաշվեկշռի մնացորդը 10 ամսվա ընթացքում 3.2 տոկոսով աճել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ։ Սակայն դրամական հոսքերի կառավարումը դեռևս պահանջում է զգալի ուշադրություն։ Խնդրում եմ Հ. Գրիգորյանին ներկայացնել հաջորդ եռամսյակի գնումների ժամանակացույցը՝ ելնելով գնումների գծով ծախսերի աճի միտումից։»

Ն. Մանուկյան՝ «Գնումների գծով ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է գների բարձրացմամբ։ Մենք պատրաստ ենք ներկայացնել գնումների ամսական հաշվետվություն՝ ներառելով գների դինամիկան։»

Ս. Գրիգորյան՝ «Խնդրում եմ ներկայացնել գնումների ամսական հաշվետվություն՝ ներառելով գների դինամիկան։ Գնումների գծով ծախսերի աճի միտումը պետք է գնահատվի ռիսկերի գրանցամատյանում։ Ինչպիսի՞ ռիսկեր ունեք գնումների գծով։»

Ն. Մանուկյան՝ «Գների աճի ռիսկը գնահատվել է 12 միավորանոց սանդղակով։ Գնումների գծով ռիսկերի գրանցամատյանը թարմացվել է հոկտեմբերի 10-ին։ Ռիսկերի գրանցամատյանը ներառվել է նիստի արձանագրության հավելվածում։»

Ս. Գրիգորյան՝ «Խնդրում եմ Ն. Մանուկյանին ներկայացնել գնումների ամսական հաշվետվությունը՝ ներառելով գների դինամիկան։ Գնումների գծով ռիսկերի գրանցամատյանը թարմացվել է հոկտեմբերի 10-ին։ Ռիսկերի գրանցամատյանը ներառվել է նիստի արձանագրության հավելվածում։»

Որոշում՝ ընդունվեց։

---

2. Հաստատվող գրություններ

Ս. Գրիգորյան՝ «Ներկայացվում է գրությունների նախագիծ՝ հասցեագրված Գ. Սարգսյանին։ Խնդրում եմ Ն. Մանուկյանին ներկայացնել գնումների գծով գրությունը։»

Ն. Մանուկյան՝ «Գրությունը վերաբերում է գնումների գծով ռիսկերի գրանցամատյանի թարմացմանը։ Գրությունը ներառում է գնումների գծով ռիսկերի գրանցամատյանի թարմացումը։ Գրությունը ներառվել է նիստի արձանագրության հավելվածում։»

Ս. Գրիգորյան՝ «Գրությունը ներառվել է նիստի արձանագրության հավելվածում։ Գրությունը ստանալու է Ն. Մանուկյանը։»

Որոշում՝ ընդունվեց։

---

3. Գնումների ամսական հաշվետվություն

Ն. Մանուկյան՝ «Գնումների գծով ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է գների բարձրացմամբ։ Գնումների ամսական հաշվետվությունը ներառվել է նիստի արձանագրության հավելվածում։»

Ս. Գրիգորյան՝ «Գնումների գծով ռիսկերի գրանցամատյանը թարմացվել է հոկտեմբերի 10-ին։ Գնումների գծով ռիսկերի գրանցամատյանը ներառվել է նիստի արձանագրության հավելվածում։»

Որոշում՝ ընդունվեց։

---

4. Գրանցամատյանների թարմացում

Ս. Գրիգորյան՝ «Գրանցամատյանների թարմացումը ներառվել է նիստի արձանագրության հավելվածում։»

Որոշում՝ ընդունվեց։

---

5. Հաջորդ նիստի օրակարգ

Հաջորդ նիստի օրակարգում ներառվելու են հետևյալ հարցերը՝

1. Գնումների գծով ռիսկերի գրանցամատյանի թարմացում։
2. Գնումների գծով ռիսկերի գրանցամատյանի թարմացում։
3. Գնումների գծով ռիսկերի գրանցամատյանի թարմացում։

---

6. Նիստի ավարտ

Նիստն ավարտվեց 09:30-ին։

Նախագահող՝ Ա. Մանասյան

Արձանագրող՝ Ս. Գրիգորյան

✓ Տարածքի և այլ տեղեկատվության վերաբերյալ, մինչև հայտերի ներկայացումը, մասնակիցը կարող է մոտենալ մատնանշված հասցեներ և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ կատարվելիք աշխատանքների մանրամասների և հայտում նշված ենթագրերի վերաբերյալ:

✓ Կատարողը պետք է աղբահանությունը իրականացնի սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

✓ Աղբահանության կազմակերպումից հետո, անհրաժեշտության դեպքում, Կատարողը պետք է լվանա ճանապարհը և տարածքը:

✓ Աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման ժամանակացույցը, աղբամանների տեղադրման վայրերը և դրանց տեսակները համաձայնեցվում են Պատվիրատուի հետ:

✓ Երևան քաղաքում աղբահանությունն իրականացվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին» թիվ 360-Ն որոշման համաձայն:

✓ Տրամադրված աղբամանները ենթակա չեն վերադարձման:

✓ Կատարողին դեկտեմբեր ամսվա համար կտրամադրվի պայմանագրի ընդհանուր գնի մինչև 9 տոկոսի չափով կանխավճար:

Գնումների մասնակցության իրավունքը և որակավորման չափանիշները՝ համաձայն գործող օրենսդրության:

Հայաստանի Հանրապետության կառավարության N 526-Ն որոշման 23-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը տեսակարար կշռով որակվել է որպես ծառայություն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Դրուզյա» ՍՊԸ
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7	ք. Տաշիր, Գետափնյա փ., տ 15
ՏՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
900011054013	Հ/Հ 1150017697737750
02647057	ՀՎՀՀ 06957206
Էդգար Գեվորգյան	Ահարոն Խաչատրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 2
«19» փետրվարի 2021թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1-5 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում														
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
6	4239	90911100/11	Բնակտարածությունների մաքրման ծառայություններ-6		7 996 800	7 996 800	19 680 000	19 680 000	19 680 000	31 680 000	31 680 000	31 680 000	48 000 000	48 000 000	48 000 000	48 000 000
8	4239	90911100/13	Բնակտարածությունների մաքրման ծառայություններ-8		8 330 000	8 330 000	20 500 000	20 500 000	20 500 000	33 000 000	33 000 000	33 000 000	50 000 000	50 000 000	50 000 000	50 000 000
9	4239	90911100/14	Բնակտարածությունների մաքրման ծառայություններ-9		9 329 600	9 329 600	22 960 000	22 960 000	22 960 000	36 960 000	36 960 000	36 960 000	56 000 000	56 000 000	56 000 000	56 000 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011054013
02647057
Էդգար Գեվորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Դրուզյա» ՍՊԸ
ք. Տաշիր, Գետափնյա փ., տ 15
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150017697737750
ՀՎՀՀ 06957206
Ահարոն Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 19 » 02 2021թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1-5 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 19 » 02 2021թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1-5 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն